

ԻՆ

ԼԻՔԱՆԱՆԱՀԱՅ ԲԵՐԼԱ ԳԱՆԹԱՐՃԵԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՀԱՄՆԻ ԼՈՒՍԻՆ

Լիբանանահայ արուեստագետ-բեմադրիչ Օննիկ Գանթարճեանի դուստրը՝ 24-ամեայ մանկավարժ, բանաստեղծուհի եւ խմբագիր Բերլա Գանթարճեան, որ համալսարանական իր բարձրագոյն կրթութիւնը ստանալու համար մեկնած է Անգլիա: Ան իր ուսումնառութեան կողքին, արժանացած է նաեւ իր բանաստեղծութիւններու հատորի հրատարակութեան:



Վերջին 50 տարուան ընթացքին, առաջին անգամ ըլլալով «Lunar codex» խորագրով ծրագիր մը կ'որդեգրուի, որ կը նպատակադրէ, հաղորդակցութեան մէջ մնալ ապագայի մարդոց հետ, լուսնի վրայ գետեղելով մարդկութեան ստեղծած արուեստի նմոյշներ, որպէսզի ապագային անջրպետի ճամբորդները կամ տիեզերագնացները երբ գտնեն այս ժամանակի պարկուճները գաղափար կազմեն, թէ ինչ հարուստ քաղաքակրթութիւն ունեցած է երկիր մոլորակը:

Նշենք, թէ Բերլա Գանթարճեանի «Կէս կին, կէս աստղալոյս» անգլերէն լեզուով գրուած բանաստեղծութիւնը մաս պիտի կազմէ դէպի լուսին գացող հաւաքածոներուն:

Ամանորի առիթով երբ Բերլա Լիբանան ժամանած էր, մեծ ուրախութեամբ այցելութիւն տուաւ ՏԱՖԱ կեդրոնատեղի, ուր հանդիպում ունեցաւ հրաժարեալ երեսփոխանուհի Փոլա Շագուպեանի հետ: Իր հետ գրոյցի ընթացքին Բերլա յայտնեց, թէ անկախ պատերազմներէն, համավարակներէն եւ կլիմայի հետ կապուած հարցերէն, մարդկութիւնը ժամանակ գտած է երազներ հիւսելու եւ արուեստ ստեղծելու ու այդ արուեստէն մասնիկ մը լուսին ուղարկելու: «Ես ոչ միայն հպարտ եմ անով, որ առաջին լիբանանահայ արուեստագետն եմ, որուն գործը պիտի հասնի լուսին, այլ նաեւ հպարտ եմ որ պիտի ներկայացնեմ երկու երկիր եւ երկու ազգ, որոնք դիմագրուած են եւ տակաւին կը դիմագրուեն գոյութեան մարտահրաւերներ»:

Լիբանանահայ բանաստեղծուհին իր քերթուածներու ընդմէջէն կ'ամրապնդէ իր ներքին հայու ոյժը: Ան ոգի ի բռին կը պայքարի՝ իրեն հարազատ երկիրներուն ծննդավայր Լիբանանի ու Մայր Հայրենիք Հայաստանի մէջ տեղի ունեցող անարդարութանց եւ պատերազմներու դէմ:

Պ.Գ.